Հաշվետվություն

7բ դասարանի նախագծային ուսուցման

Ուսուցչուհի՝ Մարինե Քոչարյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7բ դասարանի աշակերտների հետ՝

1. Սիմոն Քոչարյան
2. Էլինար Հովհաննիսյան:

Փետրվարի 15-ից մինչև մարտի 21-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում՝ ,,3-րդ դասարանի աշխատանքային տետրի ստեղծում,, թեմայով: Մեր նպատակն էր թեթևացնել ուսուցչի աշխատանքը և ստեղծել դասագրքին համապատասխան՝ գունազարդ տետր, որը տառերի ուսուցման և գրության ընթացքում սովորողներին հաճույք կպատճառի, ավելի գեղեցիկ կգրեն ու լավ կսովորեն գերմաներեն տառերը:

Նախագծի իրականացման համար անհրաժեշտ էր ուսումնասիրել այլ գերմանախոս երկրների աշխատանքային տետրեր, քանի որ մենք նախատիպը չենք ունեցել: Ուսումնասիրեցինք Գերմանիայում տպագրված ,,Lövenzahn,,(,,Խատուտիկը,,) և Ավստրիայում՝ ,,Fabuli,, աշխատանքային գիրք- տետրերը:

Կատարվեց աշխատանքի բաժանում: Նախ՝ որպես տետրի վերնագիր ընտրվեց ,,Bienenstock,,-ը(,,Մեղվափեթակ,,): Սովորողներին նմանացնելով մեղուներին, որոնք աշխատասիրության վառ օրինակ հանդիսանալով՝ կաթիլ-կաթիլ մեծ արդյունքի կարող են հասնել, որը հիմք է հետագա լեզվի իմացությանը:

Էլինարի կողմից կատարվեց տառերի ձեռագիր մշակում, տառերին համապատասխան պատկերների ստեղծում: Գեղեցիկ համակարգչային ձևավորումը ստանձնեց Սիմոնը, որի արդյունքում ստացանք ուրախ գույներով, սովորողների համար գրավիչ՝,,SIEL,,լոգոտիպով աշխատանքային տետր 3-րդ դասարանցիների համար:

Նախագծի ներկայացման ժամանակ ներկա էին նաև Ավստրիայի դեսպանը, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ավստրիացի դասախոսը և Ֆ. Վերֆելի անվան ,,Ավստրիական գրադարան,,-ի տնօրենը, ովքեր հավանություն տալով տետրին, առաջարկեցին ներկայացնել այն նախարարություն, հաստատելու՝ հետագա գործածության համար:

Սովորողները նախագիծը ներկայացրեցին երկլեզվով(գերմաներեն և հայերեն)՝սահուն, գեղեցիկ և անկաշկանդ: Այն արժանացավ ներկաների գովեստին: Սովորողները գնահատվեցին ամենաբարձր՝10 միավորով:

Vielen Dank!

Bienenstock